<<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ>>
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացումը հայոց լեզվի և հայ գրականության դասերին

ԱՌԱՐԿԱ՝Հայոց լեզու և հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Նարինե Խաչերի Միլիտոնյան

ՄԱՐԶ՝Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Երևանի հ. 105 ավագ դպրոց,ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

1. Հայոց լեզվի և հայ գրականության ուսուցման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում……5
2. Ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացումը հայոց լեզվի և հայ գրականության դասերին……9

Եզրակացություն……12

Օգտագործված գրականության ցանկ……14

Հավելված……15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հայոց լեզվի և հայ գրականության դասավանդման մեթոդիկայի առարկան հայերենի հնչյունաբանության, ուղղագրության, ուղղախոսության, բառագիտության, ձևաբանության, շարահյուսության, կետադրության ու ոճագիտության ուսուցման համակարգված ձևերի ներդաշնակ ամբողջությունն է: Արդյունքում աշակերտը պետք է գաղափար ունենա, թե ինչ տեղ ունի հայերենը աշխարհի ժողովուրդների լեզուների շարքում, որ լեզվաընտանիքին է պատկանում դա, որոնք են նրա ցեղակից լեզուները:

Աշակերտը պետք է գործնականում կարողանա կիրառել իր գիտելիքները, պետք է կարողանա կառուցել գրագետ ու պատկերավոր խոսք: Պետք է կարողանա գրավոր և բանավոր ազատ արտահայտել իր մտքերը, խոհերը, կարծիք-տեսակետները, պետք է կարողանա տրամաբանական կապ ստեղծել նախորդ դասերին անցած թեմաների հետ:

Հայոց լեզվի և հայ գրականության դասավանդումը դպրոցում կատարվում է որոշակի, կոնկրետ, պետականորեն հաստատված միասնական ու կայուն ծրագրերով:

Հայոց լեզվի և հայ գրականության ուսուցչի կարևորագույն նպատակն է աշակերտներին գիտելիքներ հաղորդելը, և գիտելիքները գործնականում կիրառելը, հարուստ բառապաշար ունենալը, բանավոր և գրավոր խոսքում դրանց անսխալ ու գրագետ խոսքում դրանց անսխալ ու գրագետ գործունեությունը:

Աշակերտի ստացած գիտելիքները պետք է լինեն հաստատուն, ծրագրային թեմաները՝ փոխկապակցված, ուսուցչի կողմից նյութի մատուցումը՝ մատչելի, պահանջները՝ հետևողական: Ուսուցչի կողմից պետք է հառնի ողջ դասարանը և յուրաքանչյուր աշակերտ առանձին-առանձին՝ իր ընդունակություններով ու կարողություններով, իր հակումներով ու նախասիրություններով, իր վառ երևակայությամբ:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել **ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացումը հայոց լեզվի և հայ գրականության դասերին**:

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական **խնդիրները.**

- ուսումնասիրել հայոց լեզվի և հայ գրականության ուսուցման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում,
- ներկայացնել ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացումը հայոց լեզվի և հայ գրականության դասերին:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Աշխատանքային տեքստը կազմում է 20 տպագրական էջ:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Ուսուցումը ստեղծագործական երևույթ է՝ ինքնատիպ, չկրկնվող մեթոդներով, հաճախ անսպասելի ընթացքով ուղեկցվող, պահի թելադրանքով պայմանավորված մոտեցումներով, ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործողությունների համակարգով նպատակին հասնելու միջոց է[1]:

Հայոց լեզվի և հայ գրականության դասավանդման ընթացքում սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների ձևավորման գործում մեծ դեր և նշանակություն ունեն ընտրված ուսուցման մեթոդները:

Հայոց լեզվի և հայ գրականության դասավանդման մեթոդիկան հենվում է որոշակի սկզբունքների վրա, որոնք չպետք է շրջանցել: Օրինակ, խոսքի մասերը պետք է անցնել ըստ ընդունված հերթականության: Հնչյունաբանությունը, բառագիտությունն ու ձևաբանությունն ու շարահյուսությունը նույնպես ուսուցանվում են հաջորդաբար, բայց փոխադարձ կապի մեջ:

Մեթոդիկայի պահանջներից մեկն էլ տեսական գիտելիքների և գործնական աշխատանքների փոխադարձ կապի ապահովումն է, որ մեծապես նպաստում է աշակերտի լեզվական կարողությունների ու հմտությունների ձևավորմանը, իսկ արդյունքը չափվում է նրա բառապաշարով, քերականական ձևերի ճիշտ գործածությամբ, ուղղագրության ու կետադրության անսխալ իմացությամբ, լեզվառճական միջոցների ճանաչմամբ ու գնահատմամբ:

Դասավանդման մեթոդիկայի հիմքում ընկած են նաև հոգեբանական գործոններ, որոնք պետք է կարևորի և նրբանկատորեն հաշվի առնի ուսուցիչը: Հանձին յուրաքանչյուր աշակերտի՝ ուսուցիչը պետք է տեսնի տարբեր բնավորությունների տեր, զգայուն ու փխրուն արարածների, որոնց նկատմամբ անզգույշ կամ կոպիտ մի քայլը կարող է հանգեցնել անցանկալի, անգամ ճակատագրական հետևանքների:

Այժմ ձեր ուշադրությանը կներկայացնենք թե ինչ խնդիրների լուծում է պահանջում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան.

---

[1]Հարությունյան Ն. Կ., Հայ մանկավարժական հանրագիտարան, հ.1, «Հայ մանկավարժության նշանավոր դեմքերը», Երևան, 2007թ., էջ 35:

1. գրագիտության ուսուցում, անսխալ ու վարժ գրելու և կարդալու հմտությունների ձևավորում,
2. աշակերտների բառապաշարի հարստացում, որը նպաստում է շրջապատող աշխարհի առարկաների ու երևույթների ճանաչմանը,
3. հայոց լեզվի կառուցվածքի, լեզվական միավորների և նրանց միջև առկա հարաբերությունների մասին համակարգված գիտելիքների ուսուցում,
4. լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորում,
5. ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների մշակում, լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտությունների ձևավորում,
6. տեքստի վրա կատարվող գործնական աշխատանքի միջոցով գրվածքի լեզվառճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության ձևավորում,
7. շարադրությունների, փոխադրություններ, ռեֆերատների համառոտագրման և այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով կապակցված շարադրանք ստեղծելու կարողությունների մշակում,
8. կարդացածը պատմելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով աշակերտի բանավոր խոսքի զարգացում,
9. տարբեր բնույթի (գեղարվեստական արձակ և չափածո, հրապարակախոսական, գիտական և այլն) տեքստերի լեզվառճական վերլուծության միջոցով աշակերտների լեզվական ճաշակի և խոսքի մշակույթի զարգացում,
10. տարբեր բնույթի բառարաններից, հանրագիտարաններից, տեղեկատու և օժանդակ ձեռնարկներից օգտվելու և ինքնուրույն կերպով գիտելիքներ ձեռք բերելու հմտությունների մշակում[2]:

Հայտնի է, որ հայոց լեզվի բոլոր բաժինների՝ հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության ու շարահյուսության վերաբերյալ ծրագրային նյութերը ավարտվում են

[2]Գյուլբուդաղյան Ս. Վ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան 1987թ., էջ 10:

իններորդ դասարանում, իսկ ավագ դասարաններում կրկին անդրադառնում են դրանց՝ ավելի խորացնելու և ամրապնդելու համար:

Հայոց լեզվի դասավանդման էությունը տեսականը գործնականում ամրակայելն է, որ կատարվում է տարբեր ձևերով ու մեթոդներով: Ինչպե՞ս պետք է անցկացնել գրավոր աշխատանքները, ի՞նչ հաճախականությամբ, գրավորի ի՞նչ տեսակներ պետք է անցկացնել դասարանում և ինչպիսի՞ գրավոր հանձնարարություններ տալ աշակերտներին, ինչպես ստուգել դրանք և ուղղել:

Դպրոցում տրվող գրավոր աշխատանքները լինում են ըստ նպատակի և ըստ նպատակի ու կատարման ձևի:

Ըստ նպատակի լինում են.

- ստուգողական,
- ուսուցողական:

Ըստ կատարման ձևի լինում են.

- արտագրություն,
- թելադրություն,
- շարադրություն,
- փոխադրություն,
- գործնական գրություններ:

Թեև ստուգողական և ուսուցողական աշխատանքները տարբերվում են իրարից, բայց և այնպես ցանկացած տիպի ստուգողական աշխատանք ուսուցողականի տարրեր, ուսուցանելու նպատակ ունի, ուսուցողականի յուրաքանչյուր տեսակով ուսուցողական ուսուցողական նպատակին զուգահեռ որոշակիորեն ստուգվում է նաև անցած և ընթացիկ նյութի ամրակայման մակարդակը: Գրավորի ցանկացած տեսակ ի վերջո նպատակ ունի աշակերտին սովորեցնել, ամրապնդել հայերենի բարդ ուղղագրությունը, կետադրությունը, շարահյուսական այս կամ այն կանոնը, ինչպես նաև ստուգում յուրացումը նախորդ թեմաների:

Ուսուցողականի ժամանակ օգտագործվում է գրատախտակը, դասագիրքը, զանազան աղյուսակներ, և ուսուցիչը անմիջական մասնակցություն է ունենում գրավորի գործընթացին՝ աշակերտի հնարավոր սխալները կանխելու համար, որովհետև սխալը

կանխելը ավելի հեշտ է, քան սխալն ուղղելը: Այսինքն, կարող ենք ասել, որ աշակերտին սխալներից զերծ պահելը ուսուցողական գրավորների նպատակադրումն է:

ԳԼՈՒԽ 2. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ—ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում կիրավող մեթոդներն ու հնարները օգնում են կերտելու ստեղծարար մարդ՝ օժտված ստեղծագործական մտածողությամբ, վերուծելու-համադրելու կարողությամբ:

Դասավանդման ընտրված մեթոդներն ու հնարները կարող են խթանել կամ ճնշել ստեղծարար ունակությունները: Դա կախված է նրանից, թե ինչպիսի առաջադրանքների կհանդիպի երեխան ուսումնական գործընթացում:

Հայոց լեզվի և հայ գրականության դասավանդման ընթացքում սովորողների մեջ ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացման համար կիրառվում է հարցման մեթոդը:

Ուսուցման մեթոդների կամ հմտությունների ցուցակը կպարունակի շատ մտքեր ու օրինակներ և դրանց վերաբերյալ ողջ քննարկումը կլցնի հատորներ:

Այնուամենայնիվ, հնարավոր է խմբավորել դրանք ուսուցման մեթոդների, հմտությունների և մոտեցումների որոշ հիմնական ոլորտներում, որոնք էական են արդյունավետ ուսուցման համար:

Երբ որոշում ենք, թե ուսուցանելիս ինչ մեթոդներ օգտագործել, կարևոր է հիշելը, որ մեթոդները և հմտությունները միայն միջոցներ են նպատակին հասնելու համար, և ոչ թե ուսուցման նպատակներ և իրենց նպատակներ:

Ուսուցման ընթացքում ուսուցիչների հիմնական դերը՝ իրենց գիտելիքներն ու տեղեկատվությունը աշակերտներին փոխանցելն է: Այս մոդելի մեջ ուսուցումը և գնահատումը դիտվում են որպես երկու առանձին մասեր: Աշակերտների ուսուցումը գնահատվում է օբյեկտիվորեն գնահատված թեստերի և գնահատականների միջոցով:

Ուսուցման աշակերտակենտրոն մոտեցման մեջ, ուսուցիչները և աշակերտները ուսումնական գործընթացում հավասարապես ակտիվ դեր են կատարում: Ուսուցչի հիմնական դերն է ուսուցանել և նպաստել աշակերտի ուսուցմանն ու ընդհանուր նյութի ընկալմանը:

Հարցման մեթոդը վերբալ-հաղորդակցական մեթոդ է, որը իրենից ներկայացնում է հարցազրուցավարի կողմից հարցվողից համապատասխան ձևակերպված հարցերի պատասխանները ստանալու գործընթացը:

Հայոց լեզվի և հայ գրականության դասավանդման ընթացքում սովորողների մեջ ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացման համար կիրառել ենք թելադրությունը:

Նախ և առաջ փորձենք հասկանալ, թե ի՞նչ է իրենից ներկայացնում թելադրությունը և ի՞նչ նպատակ է հետապնդում այն:

Թելադրությամբ որևէ նյութ գրելու կարողության ձևավորումն սկսվում է դեռևս առաջին դասարանից՝ գրաճանաչության շրջանից, այնուհետև այդ կարողությունը աստիճանաբար կատարելագործվում է և զարգանում:

Ներկայացնենք այն բնագիրը, որը թելադրվեց: Այս բնագիրը ամբողջությամբ ճիշտ գրի առնելու դեպքում, աշակերտները գնահատվելու էին 10 միավոր:

Թելադրվող բնագիրը - (10 միավոր)

Եկավ ուրախ, աղմկոտ գարունը: Արևի ճառագայթներից սկսեցին հալվել սարերի գագաթներին ծվարած ձյունի շերտերը: Կարկաչահոս առվակներն սկսեցին աղմկել: Ծառերի ճյուղերին պայթեցին հասուն բողբոջները: Առավոտից մինչև երեկո լսվում էր թռչունների կարկաչուն դայլայլը: Իրենց ապահով թաքստոցներից դուրս եկան բզեզները, սարդերը, միջատները: Իր ձմեռային տնակից գլուխը դուրս հանեց նաև փշոտ ոզնին: Բայց նա չէր ցանկանում արթնանալ: Նրան արթնացրել էր առվակը, որը խոնավացրել էր նրա փափուկ ներքնակը:

Թելադրվող այս նյութի բնագիրը հնչյունային վերլուծության ենթարկելուց հետո այն պետք է թելադրվի՝ ամբողջական բառերով: Անթույլատրելի է համարվում թելադրության ժամանակ բառն արտաբերել հնչյուն առ հնչյուն:

Բնագիրը թելադրելուց հետո ուսուցիչը աշակերտներին հանձնարարեց լուծել հետևյալ վարժությունները, որոնք միավորներով գնահատվելու էին:

Ներկայացնենք այդ վարժությունների հերթականությունը, որոնք ևս համապատասխան միավորներով գնահատվելու էին:

1. Տեքստում ընդգծի՛ր նույն վերջածանցն ունեցող 2 բառ: (2միավոր)

2. Գծով իրար միացրո՛ւ երկու այունակների համապատասխան հականիշները: (4 միավոր)

հիշել	շոգ
հով	թեթև
կեղտոտ	մոռանալ
ծանր	մաքուր

3. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողնված տեղում *ը* գրվում: Նշի՛ր ճիշտ պատասխանը:

(2 միավոր)

- __ սկսել, __ զբաղվել
- ան__նդհատ, արագ__նթաց,
- __շտապել, մթ__նշաղ

4. Նախադասություններում տեղադրի՛ր փակագծերում գրված հոմանիշներից մեկը:

(2 միավոր)

Պարանը կապեցին ծառի (կատարին, ծայրին) _____:

Ուժեղ (փոթորիկը, զեփյուռը) _____ վնասեց ամբողջ բուսականությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ հայոց լեզվի և հայ գրականության դասավանդման ընթացքում սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների ձևավորման գործում մեծ դեր և նշանակություն ունեն ընտրված ուսուցման մեթոդները:
- Հայոց լեզվի և հայ գրականության դասավանդման մեթոդիկան հենվում է որոշակի սկզբունքների վրա, որոնք չպետք է շրջանցել: Օրինակ, խոսքի մասերը պետք է անցնել ըստ ընդունված հերթականության: Հնչյունաբանությունը, բառագիտությունն ու ձևաբանությունն ու շարահյուսությունը նույնպես ուսուցանվում են հաջորդաբար, բայց փոխադարձ կապի մեջ:
- Մեթոդիկայի պահանջներից մեկն էլ տեսական գիտելիքների և գործնական աշխատանքների փոխադարձ կապի ապահովումն է, որ մեծապես նպաստում է աշակերտի լեզվական կարողությունների ու հմտությունների ձևավորմանը, իսկ արդյունքը չափվում է նրա բառապաշարով, քերականական ձևերի ճիշտ գործածությամբ, ուղղագրության ու կետադրության անսխալ իմացությամբ, լեզվառճական միջոցների ճանաչմամբ ու գնահատմամբ:
- Դասավանդման մեթոդիկայի հիմքում ընկած են նաև հոգեբանական գործոններ, որոնք պետք է կարևորի և նրբանկատորեն հաշվի առնի ուսուցիչը: Հանձին յուրաքանչյուր աշակերտի՝ ուսուցիչը պետք է տեսնի տարբեր բնավորությունների տեր, զգայուն ու փխրուն արարածների, որոնց նկատմամբ անզգույշ կամ կոպիտ մի քայլը կարող է հանգեցնել անցանկալի, անգամ ճակատագրական հետևանքների:
- Հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում կիրավող մեթոդներն ու հնարները օգնում են կերտելու ստեղծարար մարդ՝ օժտված

ստեղծագործական մտածողությամբ, վերուծելու-համադրելու կարողությամբ:

- Դասավանդման ընտրված մեթոդներն ու հնարները կարող են խթանել կամ ճնշել ստեղծարար ունակությունները: Դա կախված է նրանից, թե ինչպիսի առաջադրանքների կհանդիպի երեխան ուսումնական գործընթացում:
- Հայոց լեզվի և հայ գրականության դասավանդման ընթացքում սովորողների մեջ ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացման համար կիրառվում է հարցման մեթոդը:
- Ուսուցման մեթոդների կամ հմտությունների ցուցակը կպարունակի շատ մտքեր ու օրինակներ և դրանց վերաբերյալ ողջ քննարկումը կլցնի հատորներ:
- Այնուամենայնիվ, հնարավոր է խմբավորել դրանք ուսուցման մեթոդների, հմտությունների և մոտեցումների որոշ հիմնական ոլորտներում, որոնք էական են արդյունավետ ուսուցման համար:
- Երբ որոշում ենք, թե ուսուցանելիս ինչ մեթոդներ օգտագործել, կարևոր է հիշելը, որ մեթոդները և հմտությունները միայն միջոցներ են նպատակին հասնելու համար, և ոչ թե ուսուցման նպատակներ և իրենց նպատակներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլբուդաղյան Ս. Վ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան 1987 թ.։
2. Հարությունյան Ն. Կ., Հայ մանկավարժական հանրագիտարան, հ.1, «Հայ մանկավարժության նշանավոր դեմքերը», Երևան, 2007 թ.։

ՀԱՎԵԼՎԱԾ

Դասապլան-1

Առարկան՝ <<Հայոց լեզու>>

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ	<<Թվականի տեսակները>>
ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	*1.Ակադեմիական* • *խորացնել գիտելիքները թվականի վերաբերյալ* • *իմանալ տեսակները, կազմության և գրության սկզբունքները* • *տարբերակել թվային իմաստ և հատկանիշ արտահայտող այլ խոսքի մասերից* *2.Սոցիալական* • *ձևավորել խմբում աշխատելու համագործակցային տարրեր (*լսելու, օգնելու, խրախուսելու) • *միջառարկայական կապեր ստեղծելու կարողության ձևավորում* • *գեղեցիկ, պատկերավոր խոսելու ունակության ձևավորում*
ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ	• *տարբերակել խոսքի մասերի առանձնահատկությունները* • *հաղորդակցության ընթացքում լեզվական միջոցների, կառույցների, լեզվական օրինաչափությունների և կանոնների գիտակցում*
Դասից հետո աշակերտները կիմանան	• *թվականի սահմանումը, տեսակները, տարբերությունները* • *թվականի որպես հատկանիշ արտահայտող խոսքի մաս լինելը* • *թվականների տարբեր տեսակների կազմությունը և գրությունը*

Դասից հետո աշակերտները կկարողանան	• *տարբերակել հատկանիշ և թվային իմաստ արտահայտող մյուս խոսքի մասերից* • *գործածել խոսքում առածներ, իմաստություններ թվականների գործածությամբ* • *ճիշտ գրել և գործածել թվականները*

	Դասի ընթացքը
Ուսումնական նյութեր	*Դասագրքեր, տետրեր, պլակատ, թվականի տեսակներին վերաբերող պաստառներ, աղյուսակներ*
Հիմնական հասկացություններ	*Թվական, տեսակները, կազմությունը, կիրառությունը*
Դասի կառուցվածքը	
Մեթոդներ	*ԽԻԿ-Մտագրոհ, հետազոտական աշխատանք, զրույց-դասախոսություն, հասկացության քարտեզագրում*
Տևողությունը	*1 դասաժամ*
Խթանման փուլ՝	*10 րոպե* *Գրատախտակին գրել <<Կողպեքի վրա քառասուն հանգույց կգցի>> առածը և ուղղորդված հարց տալ.<<Ուրիշ ի՞նչ առածներ գիտեք թվականների գործածությամբ>>: Բացատրել իմաստները, գրառել տետրերում:*
Իմաստի ընկալման փուլ	*25 րոպե* *Դասարանը բաժանել 4 խմբի (համարակալման սկզբունքով՝1.2.3.4.): Կարճ զրույց-դասախոսությունից հետո հանձնարարել <<Հետազոտական աշխատանք>>՝թվականի տեսակները , կազմությունը, կիրառությունը թեմայով՝օգտագործելով տարբեր դասագրքեր:* ***1-ին խումբ** - <<Աշխարհագրություն>>դասագրքից դուրս գրել բացարձակ թվականներով կիրառություններ, բացատրել կազմությունը:*

	2-րդ խումբ *- <<Պատմություն>> դասագրքից դուրս գրել դասական թվականներով կիրառություններ, բացատրել կիրառությունները:* ***3-րդ խումբ*** *-* <<Գրականություն>>դասագրքից *դուրս գրել բաշխական և մոտավոր թվականներ:* ***4-րդ խումբ*** *- <<Մաթեմատիկա>> դասագրքից դուրս գրել կոտորակային թվականներով կիրառություններ* *Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը:* *Խրախուսվում են:*
Կշռադատման փուլ	
Անդրադարձ և տնային հանձնարարություն	*5 րոպե* *Գրատախտակին <<Հասկացության քարտեզագրում>> մեթոդով համակարգվում են ձեռք բերված գիտելիքները: Յուրաքանչյուր տեսակի վերաբերյալ բերվում են օրինակներ:* *5 րոպե* *Հարցերի տարափով կատարել անդրադարձ, գնահատել:* *Դասագրքի վարժություններից հանձնարարել տնային աշխատանք:*

Դասապլան-2

Առարկա՝ Հայոց լեզու

Տևողություն՝ 45 րոպե

Դասի թեմա՝ <<Մակբայը որպես խոսքի մաս>>

Դասի նպատակներ՝

Կիմանան՝ ինչ է մակբայը, նրա ընդհանուր հատկանիշները, ձևաբանական առանձնահատկությունը, տեսակները և շարահյուսական դերը, կկարողանան՝ ճանաչել և իրարից տարբերել մակբայների տեսակները

Մեթոդները՝

- Կարճ դասախոսություն,
- Մտքի քարտեզագրում
- Խմբային աշխատանք քարտերով

Միջոցները՝

Դասագիրք, քարտեր

ԽԻԿ համակարգ.

Ընթացքը՝

Կազմակերպչական մաս՝ առանձին թերթիկների վրա գրել ձևի մակբայ, ժամանակի մակբայ, տեղի մակբայ, չափ ու քանակի մակբայ, յուրաքանչյուր աշակերտ վերցնում է մի թերթիկ և կազմվում են խմբեր մակբայի տեսակների համապատասխան:

Խթանման փուլ

Յուրաքանչյուր խումբ թերթիկների վրա գրի գործողություն ցույց տվող բառեր (բայեր): Որից հետո խմբի անդամներից յուրաքանչյուրը կարդում է իրենց գրած բառերը:

Իմաստի ընկալման փուլ

Կարճ դասախոսության միջոցով բացատրել մակբայի իմաստը: Ուսուցիչը նախ ասում է, որ գործողության տեղ, ժամանակ, ձև, չափ ու քանակ ցույց տվող բառերը կոչվում են մակբայ: Մակբայները տարբերվում են գործողության տեղ, ժամանակ, ձև, չափ ցույց տվող գոյականներից և այլ խոսքի մասերից նրանով, որ չեն հոլովվում և հոդ

չեն ստանում, այսինքն՝ մակբայը չթեքվող խոսքի մաս է: Մակբայները նախադասության մեջ դառնում են բայական անդամի լրացում:

Կարճ դասախոսությունից հետո 1-ին (տեղի մակբայ) խմբին հանձնարարել իրենց գրած բայերին ավելացնել որտե՞ղ հարցին պատասխանող բառեր:

2-րդ (ժամանակի մակբայ) խմբին հանձնարարել իրենց գրած բայերին ավելացնել ե՞րբ հարցին պատասխանող բառեր:

3-րդ (ձևի մակբայ) խմբին հանձնարարել իրենց գրած բայերին ավելացնել ինչպե՞ս հարցին պատասխանող բառեր:

4-րդ (չափ ու քանակի մակբայ) խմբին հանձնարարել իրենց գրած բայերին ավելացնել ինչքա՞ն, որքա՞ն հարցերին պատասխանող բառեր:

Այնուհետև յուրաքանչյուր խումբ գալիս է այն եզրահանգման, որ միևնույն հարցին պատասխանող բառերի միջև կա ընդհանրություն և փորձում է սահմանել կանոնը: Առաջին խումբը գրքով ստուգում է երկրորդ խմբի սահմանած կանոնը, երկրորդ խմբի սահմանած կանոնը ստուգում է չորրորդ խումբը, երրոդինը՝ երկրորդը, չորրորդին ըստուգում է երրորդ խումբը: Իսկ ուսուցչուհին հետևում, ուղղորդում և խրախուսում է խմբերին:

Այնուհետև յուրաքանչյուր խումբ կազմում է մտքի քարտեզ և կպցնում գրատախտակին: Առաջին խմբի կազմած քարտեզը կստուգի չորրորդ խումբը, երկրորդ խմբինը՝ առաջին խումբը, երրորդ խմբինը՝ երկրորդ խումբը, իսկ երկրորդ խմբի կազմած քարտեզը կստուգի երրորդ խումբը:

Կշռադատման փուլում կատարել **քարտային աշխատանք**:

Առաջին խումբ

Քարտ 1-ին. Դուրս գրի՛ր մակբայները և որոշի՛ր, թե ինչ են ցույց տալիս.

Երկնքում ամպած, տխուր ու սև,
Լաց էր լինում միալար,
Հեռու՞, հեռու՞ լեռան ետև
Խաղում փայլակն անդադար (Հ.Թ.):

Սի՛րտ իմ, արի չկռվենք,
Էլ չլինենք մանր ու թեթև,
Մի անգամ լավ բացատրվենք
Ու հաշտ լինենք այնուհոտև:

Երկրորդ խումբ

Քարտ 2-րդ. Տրված օրինակներում որոշի՛ր ընդհանրական մակբայների տեսակները՝ ըստ կիրառության.

Առաջ կե՛ր, վերջը գոհացի՛ր: Հանկարծ բազմությունից զատվելով՝ դողդողալով քայլեց առաջ մի ծերունի՝ հայացքն ուղղած կենտրոնում հավաքվածներին: Ականջիս տակ անընդհատ լսվում էր տանտիկնոջ ճղճղան ձայնը: Սուրենն անընդհատ խոսում էր , և հավաքվածները արդեն բան չէին հասկանում:

Երրորդ խումբ

Քարտ 3-րդ. Գտի՛ր մակբայները, որոշի՛ր դրանց տեսակը, բացատրի՛ր դրանց կազմությունը.

Մի քանի րոպե չանցած՝ անտառը ողողվեց ամբողջապես. Նրա զառիվայրից սկսեցին հոսել առուներ, ճանապարհի հետքը կորավ բոլորովին: Ապա քամին քիչ-քիչ դադարեց, փայլակն սկսեց շողալ մերթընդմերթ, և որոտը լսվում էր ավելի խուլ: Այդ նշան էր, որ փոթորիկն անցել էր հեռու կողմերը:

Չորրորդ խումբ

Քարտ 4-րդ. Առանձնացրու՛ տրված մակբայները՝ ըստ տեսակների և կազմի՛ր նախադասություններ.

Բազմիցս, երբեք, հեռու, այլևս, պատեպատ, մոտավորապես, հետու, բարոյապես, հիմնովին, ազահաբար, ուշ- ուշ, հնուց, ցմահ, հնուց, անդադար, ներկայումս, մերթ, շարունակ, դուրս, մեղմորեն, դարձյալ, կրկին:

Վերջում խմբերը կներկայացնեն իրենց աշխատանքները:

Կատարել անդրադարձ:

Տնային աշխատանքի հանձնարարում: